26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 դեկտեմբերի 2002թ. թիվ 45

ք. Հրազդան

«ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ» ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՁԵՎՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Ի կատարումն «ՀՀ Կոտայքի մարզային ենթակայության մշակույթի կենտրոն պետական հիմնարկը» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1649-Ն որոշման պահանջների.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.«ՀՀ Կոտայքի մարզային ենթակայության մշակույթի կենտրոն պետական հիմնարկը» վերակազմակերպել «Կոտայքի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2.«Մարզային մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության պետական սեփականություն հանդիսացող գույքը, բացառությամբ շենքի, շինությունների, պատմամշակութային նշանակության և նվազագույն աշխատավարձի 10000-պատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնել մարզային մշակույթի կենտրոնին:

3.Հաստատել «Կոտայքի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը և փոխանցման ակտը:

4.Կազմակերպության տնօրեն վերահաստատել Արմեն Սիմոնյանին:

5.Հանձնարարել մշակույթի տան տնօրեն Ա.Սիմոնյանին՝ հիմնարկի տնօրինության շենքը, շինությունները, պատմամշակութային նշանակության և նվազագույն աշխատավարձի 10000-պատիկից ավելի արժողությամբ գույքն անհատույց սեփականության իրավունքով հանձնել վերակազմակերպված «Կոտայքի մարզային մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության հետ կնքել պայմանագիր և մինչև ս/թ դեկտեմբերի 10-ը ավարտել վերակազմակերպման հետ կապված բոլոր գրանցումները և փաստաթղթային ձևակերպումները:

6.Ֆինանսատնտեսագիտական վարչությանը /պետ Լ.Նահապետյան/ աջակցել մարզային մշակույթի կենտրոնին սույն որոշման իրականացման գործում և վերահսկել դրա կատարումը:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք. Հրազդան

02 դեկտեմբերի 2002 թ. թիվ 47

Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 15 օգոստոսի 2002թ. «Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին» թիվ 1402-Ն օրենքի 9-րդ հոդվածի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ Կառավարության որոշմամբ Եղվարդի և Բյուրեղավանի մարզադպրոցները պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմավորվելու կապակցությամբ պետական սեփականություն հանդիսացող գույքը՝ իր ամբողջ կազմով և արժեքով, բացառությամբ շենքերի, շինությունների, պատմամշակութային նշանակության, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի տասը հազարապատիկից ավելի արժողությամբ գույքը սեփականության իրավունքով հանձնել մարզադպրոցին:

2. Հանձնարարել Եղվարդի մանկապատանեկան և Բյուրեղավանի մարզադպրոցների տնօրեններին մարզադպրոցների շենքերը և շինությունները, պատմամշակութային նշանակության, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի տասը հազարապատիկից ավելի արժողությամբ գույքը անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու նպատակով ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության հետ կնքել պայմանագրեր և մինչև ս/թ դեկտեմբերի 15-ը ավարտել վերակազմավորման հետ կապված բոլոր իրացումները ու փաստաթղթային ձևակերպումները:

3. Կրթության վարչությանը /պետ՝ Հ. Կոստանյան/ աջակցել Եղվարդի մանկապատանեկան և Բյուրեղավանի մարզադպրոցներին սույն որոշման իրականացման ընթացում և վերահսկել դրա ժամանակին կատարումը:

Կ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ